

## ՏԵՍԱԿԵՏ

## ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

## ԳԱԳԱ ԲԵՐԴԱԼ

Մինչև XVIII դարի վերջը Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները ուզմատենչ ցեղերի և աշխարհակալ հզոր տերությունների արյունալի ընթարումների ու անվերջանալի ասպատակությունների թատերաբեմ էին: Թաթար-մոնղոլների անողորություններից հետո ներկայիս Տավուշի մարզը գործեն հայաթափվեց: Խսկ եռք երկրի տիրոջ կյանքն ընդհատվեց, ապա մոռացումի փոշով պատվեցին շատ տեղավայրերի ու շինությունների հայկական անունները, որոնց մեծ մասը սկսեց կոչվել մոնղոլներին փոխարինած խաշնարած թուրքմեն, ապա XVI դարում այստեղ բնակեցված դազախ, շամշադիլ, զուքրյադար, բորչալու և այրումլու թուրքական ցեղերի կճածած անուններով:

Այսպես մոռացության մատնվեց նաև Բագրատունյաց Գագիկ Ա. (989-1020 թթ.) թագավորի կառուցած նշանավոր Գագ կամ Գագա բերդը, որի տեղը փաստորեն հայտնի չէր մինչև վերջերս<sup>1</sup>, չնայած իշխող տեսակետ կա, որ այն գտնվում է «մահմեն Նոյեմբերյանի շրջանի Կողմի գյուղից մոտ 7 կմ հեռավորության վրա»<sup>2</sup>, իբրև թե Գագ կոչվող լեռան վրա, որն այժմ թուրքերեն կոչվում է Գյոր: Նաև ասլում է, որ պահպանվել են պաշտպանական պարիսպների ավերակները, և բերդի մոտ բարձրացող սարի գագաթին է գտնվում Սուրբ Սարգիս եկեղեցին, որի կառուցումը կապում են Մեսրոպ Մաշտոցի անվան հետ:

«Տեղանունների բառարան»-ի Գագկա բերդին նվիրված բառահոդվածում, դժբախտաբար, անտեսված են հնավայրը հավանաբար առաջինն ուսումնասիրած Մակար Բարխուդարյանցի հաղորդած կարևոր մանրամասները. «Բավական ամուր է բերդս, ափսոս, որ ջուր չունի իր մէջ, վասն որոյ փորուած են մի քանի վիմափոր աւազաններ, որ բազմից լի են լինում անձրևաշրերով: Համարեա թէ 20-ից աւելի վիմափոր այրեր կան յատկապէս պատրաստուած, որք ի հնումն գուցէ ծառալած են իբրև զօրանոց, յորոց մի քանիսն ունի երդիկներ»<sup>3</sup> (Հետագա բոլոր ընդգծումները մերն են - Ռ. Ա.):

Մ. Բարխուդարյանցը, սակայն, նման կարևոր տեղեկություն հաղորդելով, ցավոք, իր նշանավոր աշխատության մեջ սխալ է ներկայացնում Գագա դաշտի սահմանները, որը, ըստ նրա, սկսվելով Կուր և Խորամ գետերի միախառնման ամկյումից՝ Կոտրած կամրջից (Կարմիր կամուրջ), ձգվում է մինչև Աղստև գետը և թեքվելով հարավ՝ «սեղմվելով վերջանում է Նոր-Պիշիս (Աներկայիս Բերքաբեր - Ռ. Ա.) գիտի մօտ»:

Այսպիսով անտեսվել է Վարդան Արևելցու չափազանց կարևոր և ստուգ հաղորդումն այն մասին, որ Գագա դաշտում են Սուրբ Սարգիսը, Մշկավանքը, Մակարավանքը, Կայան և Կայծոն բերդերը<sup>4</sup>: Կողը և Աղստև գետերը հիշատակվող տարածքի եզրեր ընդու-

<sup>1</sup> «Հայտնաբերվել է Գագա բերդը», «Հայոց աշխարհ» (օրաթերթ), Երևան, 10 դեկտեմբերի 1997 թ.:

<sup>2</sup> Հայաստանի և Խարակից շրջանների տեղանունների բառարան, թ. 1, Երևան, 1986, էջ 765:

<sup>3</sup> Մակար Բարխուդարեանց, Արցախ, Բագու, էջ 396:

<sup>4</sup> Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960, էջ 34:

Անով, կենտրոնում կունենանք Ոսկեպար գետի ձորահովիտը, որի միջին հոսանքի շրջանց սկիզբ առնող դաշտը, ձգվելով դեպի հյուսիս-արևելք, միանում է Կուրի աջափայլի հարթավայրին: Ուրեմն հենց սա է Գագա դաշտը, որի հյուսիս-արևելյան ծայրին բարձրանում է Սուրբ Սարգիսը, իսկ նրա ստորոտին՝ կարծեցյալ Գագա բերդը:


IX դարի վերջին Հայաստանի ամեախ պետականությունը վերականգնած Բագրատունաց գահատումն իշխանության ամրապնդման բազմարությունը քայլերի մեջ կարևոր տեղ հատկացրեց ոպամական շինարարությանը: Ոչ միայն բազմապատկվեց հայոց զորքի թիվը, այլև սահմանների երկայնքով ստեղծվեցին պաշտպանական կառուցմեր, որոնք պահպանական կառուցմերի մարզեր: Բերդեր (ամուռներ) կառուցվեցին նաև նոր տերության հյուսիս-արևելյան գավառներում:

Հնավայրերի քարտեզն ուշադիր դիտողը կմկատի, որ պետության պաշտպանական խնդիրներին համապատասխան ամրոցները հիմնվել են Կուր գետի առափնյա հարթավայրից 20-30 կմ հեռավորության վրա, այդ գավառների համալեռնային գոտու ձորահովայի հիշող դժվարամատչելի կետերում, որ կարող էին հարձակումների ժամանակ հոսանքի հաղորդեն պաշտպանվել և հակառակորդի ուժերը մաշելով նաև հաղթական մարտեր մեջ սահմանակալ երկրամասերի տերերը:

Այս տրամաբանության ու կոչմանը միանգամայն համապատասխանում են Խնձորուտ, Տավուշ, Հայում, Աղսուն և Կիրանց գետերի ձորահովիտների միջնամասերում կառուցված Երգևանք, Մածնաբերդ, Տավուշ, Կածարերթ, Տերունական, Նոր բերդ, Կայծոն, Կայան, Մաթկանաբերդ ամրոցները, իսկ Կոթի գյուղի մոտ նշվող Գագա բերդը՝ ոչ: Ինչ չո՞ւ: ԶԵ՞ որ այս բնակավարք (ամրոցը) գտնվել է Բագրատունյաց պետության հենց սահմանի ներին: ՄԻ՞թե նրա տերերը եղել են այնքան ոչ խելամիտ, որ տեղի սխալ ընտրության պատճառով իրենց հպատակների հետ անընդհատ ենթարկվել են Կուրի հարթավայրից և Կովկասյան լեռների կողմից անարգել հոսող թշնամիների հարձակումներին՝ ժամանակ չունենալով ինքնապաշտպանության կազմակերպման համար:

Հարթավայրին հարող բերդի գրավումը դժվար չէր լինի, որովհետև պաշարումը տեղի կունենար անհապաղ, և շատ արդյունավետ կգործենին պարսպակործան մեքենաները, որոնց կիրառումը մյուս բերդերում գորեթ բացառված էր դժվարին տեղանքի շնորհիվ: Խակմայի անավայրի ամենախոցելի կողմը, ինչպես նկատել է Մ. Բարխուտարյանցը, խմելու շրիմեր բացակայությունն է: Դրան ավելացնենք, ամունք՝ նաև խիստ շոգը: Համալիրին ծանոթ հնագետները նաև կարող են վկայել, որ պաշտպանված պարիսպները պատկանում են մայության այլ՝ XII դարում ապրած Վահրամյաններից վաղ ժամանակի: Խակ եթե սա չէ նշանավոր Գագա բերդը, ապա մի՞թե թշնամիների առաջ բաց է մնացել Բագրատունյաց թագավորության այս սահմանի Ոսկեպար գետի հովիտը: Խիարկե՞ն՞չ:

Գագա բերդը գտնվել է ճիշտ այնտեղ, որ հյուսիս-արևելյան կողմանքի պաշտպանական համակարգի կոչման տրամաբանությամբ պիտի լիներ՝ Գագա դաշտի վերնամասում, Ոսկեպար գետի միջին հոսանքի շրջանում, բնական խոր անդունդի եզրին, բավականին ընդարձակ ավերակ գյուղաքաղաքի հարավյան կողմում, որտեղից գետին հոսանքն ի վար բացվում է Գագա դաշտը:



Գագա բերդի տեղագրությունը (գծագրում՝ Բեղիմակի)

Հայտնի է, որ Զաքարյանների և Վահրամյանների իշխանության ժամանակներում (XII-XIII դդ.) Գագա բերդը եղել է ոչ միայն նշանավոր ամրոց, այլև՝ մեծ բնակավայր, որ պիսին չի նշանարկում կարծեցյալ Գագա բերդի հնավայրում։ Եվ այնքան հարուստ կյանքով է ապրել, որ նրա բնակիչները մոնղոլ զորապետ Մողար Աղջիմի գերությունից ուրասուն դամենկան ուկով փրկագնել են Խորանաշատի առաջնորդ Վանական վարդապետից<sup>5</sup> և մոնղոլական հրոսակներից փախչելով այստեղ ապաստան են գտել շրջակա գավառների հազարավոր բնակիչներ։

Կրկնեաք, որ կարծեցյալ Գագա բերդն այնքան էլ մեծ բնակավայրի տպավորություն չի թողնում։ Եվ դժվար է հավատալ, որ Կուրի դաշտավայրից հարձակվող թշնամիներից հայածված խաղաղ հայ մարդիկ փախել են դեպի «արի բերան» հարթավայրի եզրին գտնվող շրագուրկ բնակավայր և ոչ թե դեպի Գագա դաշտի հարավկողմյան լեռները, որոնց քարափների ծերպերին, խոր ձորերում, մոլոր անտառներում, գույն նաև այնտեղ հատող հզոր բերդում կամ նրան կից մարդաշատ գյուղաքաղաքում շատերը կարող էին փրկություն գտնել, նաև՝ խմելու ջուր։

Ուրեմն այնտեղ՝ գավառի նախալեռնային գտտում պիտի գտնվեր Վահրամյանների իշխանանիս Գագա բերդը։ Ուստի մեր որոնումների նմթացքում առաջնորդվեցինք հանգուցյալ Բագրատ Ովորբարյանի տեսակետով։ Հենվելով Կիրակոս Գանձակեցու, Վար-

<sup>5</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 181։

դամ վարդապետի, Մ. Հովհաննեսի հաղորդած տեղեկությունների վրա, նա գրում է, թե Գագա բերդի «Ստուգ տեղադրությունը հայտնի չէ: Հավանութեան գտնվել է Աղստև գետի ձախ ափին. Գագա դաշտի հարավային կողմում»<sup>6</sup>:

Իսկ Գագա բերդի՝ Կոթի գյուղի մոտ լինելու տեսակետը գալիս է XIX դարի հետազոտողներից, որոնք պարզապես միշտ չեն ընկալել XIII դարի մեջ գիտնական Վարդան Արևելցու հաղորդումը Գագա գավառի և Գագա բերդի մասին: Պատմիչը հայտնում է, որ թաքար-մոնղոլները Հայաստանի վրա հարձակվել են վիճակահանությամբ, ուստի յուրաքանչյուր հրամանատար իր զորքերը տարել է իրեն բաժին ընկած գավառի ու դրակի վրա. թվարկելով Մոլար Առյինի կատարած գրավումները, պատմիչը նշում է. «Ճաւուշ, զկածարեթ, զՏերունականն, զԵրգեւանքն, զՄածնաբերդ՝ որ էր Կիրիկեանց Ամիսարթանայ. զՆոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորազնին, և զՔաւազին անմարտնչելի ամրոց, և զԳագ անուանի բերդ, և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հոչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն Սրբոյն Սարգսի զօրավարին, օրինեալ ի Սրբոյն Մեսրովքայ Վարդապետէն և Թարգմանչեն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած»<sup>7</sup>:

Ինչպես տեսնում ենք, պատմիչը բժանների հերթականությամբ է թվարկում Վահրամ իշխանից Մոլար Առյինի գրաված բերդերի ու գավառների անունները: Խնդրո առարկա տարածքում մոնղոլ զորավարը նախ գրավել է Գագա դաշտի հարթության մեջ հառնող Քավազին (կամ Գավարզին) անմատչելի ժայռ-ամրոցը, ապա Գագ անվանի բերդը: Այս տեղ, անշուշտ, կենտրոնական դիրք է գրավել Գագա դաշտը, որի «գլխին»՝ այսինքն ծայրամասի կատարին, վեր է խոյանում «լայնանիստ և երկայնատարած» դաշտին նայող Սուրբ Սարգսի եկեղեցին, որն օրինել է Մաշտոցը: Եվ ոչ մի խոսք այն մասին, թե Գագա բերդը գտնվել է Սուրբ Սարգսի եկեղեցու հարևանությամբ, կամ՝ ընդհակառակը: Պարզապես Վարդան Արևելցու ասածը պիսալ է հասկացվել, մանավանդ որ երկար ժամանակ չի հմացվել Կոթի գյուղի մերձակայքի հնավայրի ինչ լինելը և Գագա բերդի որտեղ գտնվելը:

Ներկայիս Տավուշի մարզի Ոսկեապար գյուղից 7-8 կմ արևմուտք, համանուն լեռնաշղթայի սկզբանամասի ստորոտին, Ոսկեապար գետի ձախակինյա սարավանդին, 8-10 հեկտարի վրա, տարածվում է մի հնավայր: Դեռ հեռվից այցելուին գրավում են որմնանեցավոր հզոր բերդապարիսպներն ու նրանից ներս կանգուն աղյուսապատ երկիրկանի շինությունը, որի շրջակայքում նշանավոր են երկրաշարժից, թե՝ պայտեցումներից կործանված կառուցների փլատակներ:

Պարսպից դուրս, դեպի Ոսկեապարի լեռնաշղթայի ստորոտ, դարավանդների վրա տարածվում է բերդին կից ավերակ բնակավայրը, որը չափերի շնորհիվ գյուղաքաղաք պիտի կոչվել: Բերդի հատակագիծը նման է արևելքից արևմուտք ուղղված սեպի, որի գլխամասը բաղկացած է իրարից 45 մետր հեռավորությամբ գուգահեռաքար հյուսիսից հարավ ձգվող կրկնապարիսպներից: Դրանցից արտաքինի հարավային անկյունից, գետի խոր հատակից գրեթե ուղղաբանաց ելնող ափեզրով աղեղվում է 8-12 մ բարձրությամբ պարիսպը, որը մի քանի տեղում ավերված է: Շարվածքով սա շատ նման է Կայան բերդին:

<sup>6</sup> Հայկական սովորական համբագիտարան, Բ. 2, Երևան, 1976, էջ 636:

<sup>7</sup> Հատացումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Կենետիկ, 1862, էջ 144-145:

Արտաքին կրկնապարասպի հյուսիսային ծայրից սկիզբ առնող բերդապատշ, որը միշտ աբրերն անջատել է կից գյուղաքաղաքից, ինչ-որ արհավիրքից սաատիկ ավերվել, երկար ճգփող քարակուստի է Վերածվել: Մաս միշտամասում եղել է միակ դարպասը: Բերդից ներս, հյուսիս-արևելյան կողմում, արևելք-արևմուտք ուղղությամբ վեր են բարձրանում, մեր կարծիքով, իշխանական պալատի պահպանված երկու հատվածները, որոնց միշտամկյալում եղել է մեծ սրաՅ: 30X5.5 մմ ուղղամելյուն հատակագծով այդ շինությունը, ի տարրերություն պարհապնդրի, կերտված է թործված կարմիր աղյուսմերից, որոնք կապակցված են կիրավագի շաղախով:

Առավել հետաքրքրություն է ներկայացնում կառուցի արևելյան՝ երկրարկանի հատվածը: Մեր կարծիքով՝ առաջին հարկը բերդի (գավառի) իշխանի ծառայել է սեղանատուն, իսկ երկրորդը՝ մեջարան: Դրանց հետևում գտնվող ավերված մեծ սրահում երկրամասի տերը հավանաբար հյուրեր է շնորհել և աշխատել: Անանուն ճարտարապետն այդուև պատերից վեր, տանիքի եզրերով ճգփող բազալտե քիվերի վրա, թողել է իր վարպետության կմիջը՝ հիացմունքի արժանի բարձրարվեստ զարդարանդակներ:

Պատը մերսից ծեփված է եղել և զարդարված՝ որմնանախշերով: Երկրարկանի հատվածի հարավային պատին կից, որա սագաշեն տանիքի շարունակության տակ, եղել է մի այլ, այժմ լիովին ավերված շինություն, որի ծեփին պահպանվել են գունավոր սրբապատկերներ: Կասկած չկա, որ սա եղել է բերդի եկեղեցին: Ասել է, թե գավառին աշխարհիկ ու հոգնոր կառավարիչներն ապրել են հարևանությամբ, և դրա կարմիքը ծանր ժամանակներում, աճուշու, շատ է գգացել ժողովրդի հոգևոր հովիվը:

Պալատի և հյուսիսային բերդապարասպի միջև ճագարածն շրավագանն է, որը կարող էր խաղաղ պամերին լցվել մոտակաքրից հոսող առվի զուզալ ջրով և լեռնաշղթայի ստորոտի աղբյուրից՝ կավել խողովակներով: Պատի շրավագանից հազարավոր մարդիկ կարող էին հագեցնել իրենց ծարավը:

Հարավային պարսպի երկայնքով ու բերդի արևմտյան հատվածում կան ավերված ու կիսավեր շինություններ, որոնց հաշմակությունը կարող է պարզվել միայն պեղելուց հետո: Այստեղից երևում է Կուրի աշակենակի անցուդարձերը հսկող Գավարդին (Քավաղի): Ժայռ-ամրոցը, որը կրակի ու ծիփի ազդանշանով կապ է ունեցել նաև նոր բերդի, Կայծոն բերդի և Գանձաքարի Բուրոյ ամրոցի հետ:

Հնավայրի սահմաններում կան գերեզմանոցներ և այլ շինություններ: Նորահայտ բերդը ու ժամանակի պահանջներին համամատ բարեկարգ ճանապարհով, Ուկեպար գետի ձախակինյակով, միացած է եղել Գավարդինի ստորոտով անցնող Դվին-Տփիս և Տփիլս-Գանձակ քարավանային ճանապարհներին: Հնավայրի արևելյան կողմից մեկ այլ ճանապարհ հիմնականից թեքվել է դեպի Մշկավանք, Կողըի ճորախովիս: Իսկ բերդից 4 կմ ներքև դեռ կանգուն միակամար «Չորոյ» կամրջով ճանապարհի մի կարևոր ճյուղն անցել է Ուկեպար գետի աշակենակ և ավերակ մի քանի գյուղի միջով բարձրացել արևելյան կողմից լեռնաշղթան և իջել հաջորդ ճորախովտին (Կիրանցի) իշխած Մահկանաքերդի Արծրունիների Կումեն գյուղաքաղաքը\*:

\* Ներկայուն կոչվում է Առաքելոց հմավայրի անունով:

Այս ամենն ավելի են ընդգծում Ուկեպարի ձորում մեր ուշադրությանն արժանացած հնավայրի դերն ու նշանակությունը՝ անցյալի հերոսական ու եղերական անցուղարձերի շարքում: Ուստի համոզված ենք, որ սա է Վարդան Արևելցու ասած Գագ անվանի բերշարքը: Այդ դեպքում օրինական հարց է առաջանում, մի՞նչև հնարավոր է, որ մինչև այժմ այն վկիրած լինի մեր հնագետների ուշադրությունից:

Կարող է լինել մեկ բացատրություն: Ծիշտ է, բերդը գտնվել է անխկին Նոյեմբերյանի շրջանի վարչական տարածքում, սակայն նրան մերձենալու միակ ուղղությունը մինչև 1972 թիվը Հայաստանի սահմանից ներս հայտնված Արդբեջանի Ղազախի շրջանի Յովսարի Ասկիհարա գյուղը հայկական ամենամոտ Ուկեպար գյուղին պարզապես մեկուսացրած է պահել հնավայրից:

Թաթարները բերդը կոչել են Ղալաքենդ (Բերդագյուղ): Դրա տեղն իմացել են ուկեպարցիք, սակայն մոտածել են, թե թաթարական է, ասկիհարցիները՝ հակառակը: Եվ այսպես, Գագա բերդը մնացել է աշխարհի մոռացված անլուրում չուստմնասիրված, անհայտության ու անորոշության մեջ:

«Ոչ մեկի չպատկանելու» պատճառով այս գյուղերի համար այն վերջին տասնամյակ-մերում ծառայել է որպես «այյուսահանք», որի շինությունների թրծված կարմիր աղյուսներից բազմաթիվ փոխեր են կառուցվել: Մնաւմ է տալ մեկ այլ հարցի պատասխան: Եթե Ուկեպարի ձորի միջնամասի դժվարամատչելի սարավանդի վրա գտնվող ամրոցը Գագա բերդն է, ապա ի՞նչ է այդ հովտի հյուսիս-արևելյան, Գագա դաշտի ներքնամասում, Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ գտնվող վիմափոր այրավոր հնավայրը, որին սխալմամբ վերագրվել է Գագա բերդի ները: Վերջինիս ինչ լինելը փորձենք իմանալ հայպատմիչների հաղորդած տեղեկություններով:

Եղիշեի Պատմությունից հայտնի է, որ Վարդանանց ապատամբության սկզբում Վարդան Մամիկոնյանը կուր գետի աջափնյա դաշտում, Խաղիսաղ քաղաքի մոտ, պարտության մատնեց պարսիկներին, չնայած Վարդանի գալու մասին Սերուստին նախապես հայտնել էր Վասակ Սյունին:

Կեաքերի ժամանակակից պատմիշն ասում է. «Այս բանը գոեց ու հասկացրեց մարզպանին, որի անունը Սերուստ էր: Իսկ առ, երբ լսեց Վասակից այդ բոլոր խրախուսանքները և սոլուգերով համոզվեց, որ Հայոց ապարապետը սակավաթիվ գնորով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Շորա կողմերում, այլ հավաքեց իր ամրոց բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր ամռնով մեծ գետը և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մոտիկ Խաղիսաղ քաղաքի հանդեպ, որ Աղվանների թագավորների ձմեռանցն էր»<sup>8</sup>: Ղազար Փարպեցին և Մովսես Կաղամնատվացին, անդրադառնալով Խաղիսաղի ճակատամարտին, կրկնել են Եղիշեին:

Սակայն Մովսես Կաղամնատվացին Խաղիսաղ քաղաքի տեղադրությունն ավելի է ճշտել հոների V դարում Հայաստանի վրա ձեռնարկած արշավանդի առթիվ շարադրանքում: «Այդ ժամանակներում ... թագավորն իր զորքերն ու ... բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուսիք գավա-

<sup>\*\*</sup> Մեր տեսակետն առայժմ մնում է առկախված: Հնավայր այցելած գիտմականները չեն ասել իրենց թերքական դեմք խոսքը:

<sup>8</sup> Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1971, էջ 77-78:

ուս: Իր բանակը բերեց, բնակեցրեց Խաղխաղ քաղաքի մոտ: Այստեղ երեք գորավար-ներ ընտրելով՝ Աշաճակեց մեծ բանակի հրամանատարներ ու նրանց հրամանատարության տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը. և հրամայեց երեք մասի բաժանել, հարձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաց թագավորության հարավ-արևելյան սահմանների ամենամոտ տարածքին:

Այսպիսով Խաղխաղ քաղաքը գտնվել է Անդրկովկասի կենտրոնում, Արցախից բավական հեռու, և դա համընկնում է Վրաց թագավորության հարավ-արևելյան սահմանների ամենամոտ տարածքին:

Խակ պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ այդ դարերում Ուստիշի և Վրաստանի սահմանն անցնում էր Կուր և Խրամ գետերի հովտով, որոնց միախառնման ամելյունում էր գտնվում Հունարակերտ ամրոցը՝ Խաղխաղին ամենամոտ կետը: Դրանք իրարից հեռու էին 25 կիլոմետր: Խակ Գագա բերդի տեղը ստուգ չիմացած Ղևոնդ Ալիշանն ու Մակար Բարխուդարյանը Խաղխաղ քաղաքը տեղադրել են Գանձակի կողմերում, Զակամ գետի Ալեքսի հոսանքի շրջանում, Վրաստանի սահմանի ամենամոտ կետից՝ Հունարակերտից 75-80 կմ հեռավորության վրա, որը Եղիշեի վկայության անտեսումն է:

Ուստի պիտի ընդունել, որ Սուրբ Սարգիս եկեղեցու մոտ գտնված հնավայրն է եղել Հայաստանի և Աղվանքի թագավորների ձմեռային քաղաքը, որի կենսագործություններության համար խիստ նպաստավոր էին աշխարհագրական դիրքը, բնությունն ու ձմռանը մեջ կիման: Հավանաբար շոգ ամուսն այստեղ շատ քիչ մարդ է մնացել: Խակ սեպտեմբերի կեսերին, երկար ընդմիջումից հետո, երբ սկսվել են կենարար անձնները, կարճ ժամանակում անդաստանները պատվել են փարթամ կանաչով, և զովություն է իշել երկրին, թագավորն իր մերձավորներով ուստան քաղաքից Խաղխաղ է եկել, որը գտնվում էր Անդրկովկասի կենտրոնում՝ Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի սահմանների գրեթե կցանվածքում: Բազմաքանակ նախիրներն ու հոտերը միմնչ գարուն, Գուգարաց ապրեր ամառուստի տեղափոխվելը, արածել են գրեթե ձյուն չտեսնող տաք հովհտներում:

Երկրամասի անտառներն ու գետերը որսառատ էին: Խսելու ջրի հարցը զոյ եղանակին կարելի էր լուծել ձմեռանոցային քաղաքից արևելք, մոտակայքից հոսող Ուսկեպար գետից, կամ աջակողմյան ձորի (Ալերկային Կոթի գյուղի) բնական աղբյուրներից: Գտնվելով Ուսկեպար լեռնաշղթայի հեռավոր ծայրամասի հարավային առորոտին, Խաղխաղը պաշտպանված է եղել ձմռանը հյուսիսից փշող վտանգավոր քամուց, որը XIX-XX դարերում կոչում էին «Դարայազ»:

Մոտակա հարթության մեջ, ձորերում ու սարերի վրա ռազմախաղեր անցկացնելու լավ հնարավորություններ են ունեցել թագավորի դրամիկ գումար ու բերդապահ գործը, որոնց գորանց են ծառայել վիմափոր այրերը: Հայոց մայրաքաղաքի հետ Խաղխաղը կապված է եղել Արտաշատ-Տփիշ քարավանային ճանապարհով, որից ձմեռային քաղաքը գրանցվել է 3 կիլոմետրի վրա:

Միուն քանիվ, մենք նորից ենք պնդում, որ X-XIII դարերին վերագրվող Գագա բերդը չկա Սուրբ Սարգիս եկեղեցուն հարևան հարթավայրում, այն գրնվում է Ուսկեպար գեղի միջին հոսանքի շրջանում, իսկ Սուրբ Սարգիս մոտ եղել է Խաղխաղ ձմեռային քաղաքը:

<sup>9</sup> Մովսես Կաղամակատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 73: